

մ/ սննդամթերքի արտադրության կազմակերպման և կառավարման համակարգի մշակման և կիրառման նպատակով կազմակերպվող համապատասխան հետազոտությունները և վերաբերյալ համապատասխան հարցերի կարգապահումը և կատարման համար՝

·/ իրականացնել սննդամթերքի արտադրության կազմակերպման և կառավարման համակարգի մշակման և կիրառման նպատակով կազմակերպվող համապատասխան հետազոտությունները և վերաբերյալ համապատասխան հարցերի կարգապահումը և կատարման համար՝

դ/ պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար՝

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը՝

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետը՝

ա/ աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի և աշխատակազմի այլ աշխատողների հետ։

բ/ առանձին դեպքերում քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ։

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին։

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետը՝

ա/ ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ։

բ/ ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ նորմատիվ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն։

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը։

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն։

ե/ տիրապետում է մեկ օտար /կարդում, կարողանում է բացատրվել/ լեզվի։

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետը՝

ա/ կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ/ իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին.

գ/ անհրաժեշտության դեպքում քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

դ/ անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե/ իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին.

զ/ ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

է/ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և /կամ/ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները: Վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, քաղաքաշինական կադաստրը, կազմակերպում և անցկացնում է մրցույթներ և աճուրդներ, կանխարգելում և կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում դրանց հետևանքների վերացումը: Կազմում է ավագանու նիստերում քննարկվող քաղաքաշինական հարցերի նախագծերը, նախապատրաստում է գույքային միավորների առանձնացման և ավել օգտագործվող հողամասերի որոշումներ, վարում է շենքերի և շինությունների հաշվառումն ու բաշխումը, կազմում սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող համայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման և ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը, համայնքի բնակավայրերի բարեկարգումն ու կանաչապատումը: Կազմակերպում է աղբահանությունը, սանիտարական մաքրումը, գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:

ը/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Գլխավոր մասնագետ-ճարտարապետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1. Գլխավոր մասնագետ-ճարտարապետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: